Փեսաղբար հարսըն ու փեսայն
Թող երկքն յիրար խընտան:
Սարկաւագունք ժողովեցան,
Քո սիրուն եղեն գուսան.
Շատ ապրի հարսն ու փեսայն
Թող երկուքն յիրար խընտան,
Աւրէնք հրամայէ զայս բան,
Թէ նոր հարսն և իւր փեսայն
Զփեսաղբարըն լաւ պատուեն
Եւ լինին ծոռ ու ծառայն,
Բարունից երկնից արքայն
Եւ սուրբըն պատւոյն տըղայն [1]
Երկուքն իջեալ Յորդանան՝
Մըկըրտեաց զնա Յովան,
Կանչեաց ահեղ քաղցրաձայն
Այն տէրըն Յիսուս արքայն՝
Կանայք շատ տղայք ծընան,
Չէ իմ կնկայհաւր նըման,
Առաւաւտ ի լոյս նըման
Լուսափայլ կենաց փեսայն,
Փեսաղբայրըն պատուական.
Եւ յերկուսն յիրար նըման,
Փեսայն հարաւոյն կողման
Իւսիսի հարսին նըման.
Երկուսն ի յիրար եկան,
Այհայ ժամ եղև գարնան,
Ամպն ի յերկինան թուխ դարձան,
Զանձրև քաղցրահամ ցաւղան,
Որ երկիրըս ծընանի,
Ծաղկունք զարդարեալ ցընծան,
Գովեմք զհարսն ու փեսայն,
Սոքայ Յակոբա(յ) նըման.
Շալլայ [2] ի միջաց խնտան,
Ծնաւղ լինին շատ մանկան:
Իւր եղբարքն առ ինք եկան,
Զփեսաղբայրըն առին զփեսայն.
Վազմնէքն ի յորս ելան
Հաւասար ի ճանփա(յ) մըտան,
Ես պատմեմ մէկ զարմանք բան,
Որ ամէնն աչաւք տեսան.
Հայ յորս յորս գահն ելան,
Մէկ մի համբուրեաց զփեսայն.
Սադաղայ [3] ես քեզ երթամ,
Ո՞ւր կայիր դու աւչափ ժամ.
Քեզ եմ պահեր արմաղան [4],
Հազար որսու չես տար զայն,
Աստ մայր իմ դու սիրական,
Զանայ դու բեր զայն.

1. Յիսուս եւ ս. Կարապետ:
2. Արաբ. ինշա Ալլահ, որի աղաւաղեալ ձեւն է ալլահ «Տայր Աստուած, երանի թէ, մաղթեմ որ»:
3. Արաբ. Սադակա «ողորմութիւն»:
4. Թուրք. արմաղան «ընծայ»:

Տես ըղ հանգամայս որ կան,
Ի հոս չեն կենար կերգան,
Յայնժամ ելաւ քահան(ան)
Երեք զանգըն արմաղան.
Աֆարին [1] իւր ծընողին,
Որ է աղջիկ և կուսան,
Եւ երկուքն առեալ տարան,
Ի յեկեղեցին մտան,
Խաչիւըն պսակեցան,
Զուգակից հալալ սեղան։
Չայնեցէք ըղկուվազան,
Լարեն զտապլակն [2] և զչաւշան [3],
Եւ հետ կանչեն զթալըլալան,
Որ հարսնիքս ուրախանան.

Կ. Վ.

---


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ **1900** ԹՈՒԱԿԱՆԻ

# ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ. Редакція «МШАКЪ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „МСНАК“.

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։


1. Պրս. աֆերին «կեցցես»:
2. Պրս. թարլան «փոքր բազէ»:
3. Պրս. չաւշա «երգ, եղանակ»:

# ՆՈՐ—ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

*Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1900 ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն գծով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից։*

*«Նոր-դար»-ի տարեկան գինն է* 10 *րուբլի, վեց ամսուանը՝* 6 *րուբլի. երեք ամսուանը՝* 3 *ր.* 50 *կ., Թիֆլիսից դուրս ամիսը* 1 *ր.* 50 *կ. հատով դուրսը՝* 7 *կ., Թիֆլիսում՝* 5 *կոպ.։*

*Բաժանորդ. են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։*

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ *բաժանորդները վճարում են տարեկան* 40 *ֆրանկ։*

*Յայտարարութիւններ ընդունում են և օտար լեզուներով առաջին երեսումը՝ բառը* 4 *կոպէկ։*

*Խմբագրատունը գտնւում է Վոդովոզնայա փողոցում, տ.* № 20.

*Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝* ТИФЛИСЪ ВЪ РЕДАКЦІЮ ,,НОРЪ-ДАРЪ" *կամ* Tiflis (Caucase), Rédaction du journal ,,Nor—Dar".

# ԲԱԶՄԱՎԷՊ

## ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

*տարի ԾԸ.*

*Հասցէն է* Rédaction de la Revue ,,BAZMAVEB" St. Lazare VENISE (Italie)

# ,,ԼՈՒՄԱՅ"

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

*Ե. տարի*

*Հրատարակւում է տարեկան երկու գիրք*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է 3 ՌՈՒԲԼԻ

*Իւրաքանչիւր գիրքն առանձին* 2 *ր.*

*Հասցէն՝* Тифлисъ, Редакція ,,ЛУМА" *կամ* Прот. Гюту Аганьянцу.

Բացուած է 1900 թ. բաժանորդագրութիւնը

XVIII **ԱՂԲԻՒՐ** XVIII s. և XI s. **ՏԱՐԱԶ** XI

*Ամսագրի և շաբաթաթերթի*

Տարեկան բաժանորդագինը **10** ր., արտասահմանի **18** ր. ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդագրութիւն չէ ընդունւում: ԱՂԲԻՒՐ ամսագրի տարեկան գինը 3 ր. ՏԱՐԱԶԻՆԸ—6 ր. ՑԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ, ԳՐԷՄԻԱՆԵՐ, ԳԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ ստանում են *Աղբիւր* և *Տարազ* միեւնոյն հասցէով ստացող բաժանորդները:

*Հասցէն՝* ТИФЛИСЪ, Редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ. TIFLIS (Caucase) Rédaction des jour. Agbur et Taraz.

*Խմբ.-Հրատ.* ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ